«ՄՇԱԿ» ԹԵՐԹՆ ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ ԿԱՌԼՈՍՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

ՀՏԴ 94 (4)+070 (054)

Մովսիսյան Ֆելիքս
ՎՊՀ պատմության ամբիոնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր[*]
Վանաձոր, Հայաստանի Հանրապետություն

Արևելահայ լիբերալ հոսանքի գաղափարակիր և առաջամարտիկ «Մշակ» թերթը կարևորել է Իսպանիայում 1872-1876թթ. ընթացող կառլոսյան պատերազմը, որի ընթացքին պարբերաբար անդրադարձել է «Արտաքին լուրեր» և «Արտաքին տեսություն» բաժիններում: Թերթն իրավացիորեն նշում է, որ պատերազմի հիմնական պատճառը Բուրբոնների արքայատոհմի ներսում ընթացող գահաժառանգման համար պայքարն է: «Մշակը» իսպանական պետության կողմնակիցների և դոն Կառլոսի համախոհների միջև ընթացող պատերազմը բնութագրում է որպես քաղաքացիական, արյունալի և եղբայրասպան: Թերթը կառլոսականներին անվանում է հին կարգերի և կղերականության կողմնակիցներ, իսկ նրանց զորքը՝ ավազակախումբ, որը պայքարում է օրինական իշխանության դեմ: «Մշակը» դրվատում է Իսպանիայում հանրապետության հռչակումը և կարծիք հայտնում, որ իսպանական ժողովուրդը խանդավառված է երկրում հանրապետության հաստատումով: Ելնելով այս մտայնությունից՝ թերթը կառլոսյան պատերազմը համարում է հին կարգերի կողմնակիցների և առաջադիմության միջև պայքար, ծնվող հանրապետության ու մեռնող միապետության հուսահատ պատերազմ:

Բանալի բառեր՝ *Իսպանիա, ֆուերոս, գահաժառանգություն, Իզաբելա II, դոն Կառլոս, քաղաքացիական պատերազմ, հանրապետություն, Ամադեո I, Ալֆոնսո XII:*

Ներածություն

1830-1870-ական թթ. Իսպանիայում տեղի ունեցած կառլոսյան պատերազմներն արձագանք գտան ժամանակի հայ պարբերական մամուլում: Դրանց, ի թիվս այլ պարբերականների, արձագանքեց 1872 թ. Թիֆլիսում լույս տեսած արևելահայ ազատամտականության գաղափարակիր «Մշակ» թերթը, որի հրատարակմամբ «հայ մամուլի պատմության մեջ սկսվեց մի նոր շրջան, նոր դարագլուխ»[1] *: Թերթի խմբագիր Գրիգոր Արծրունու բնորոշմամբ՝ 1870-ական թթ. «Մշակն» ավելի շատ քաղաքական թերթ էր, որն ընդգծված հետաքրքրությամբ լուսաբանում էր եվրոպական երկրներում ընթացող քաղաքական իրադարձությունները: Նա XIX դարի եվրոպական քաղաքական բարոյականությունը համարում էր հետևյալ սկզբունքը. «Ես ապստամբվում եմ, ուրեմն ես կամ»*[2]*:*

---

[*]Հոդվածը ներկայացվել է 15.12.2022:
Տպագրության է երաշխավորել ՎՊՀ պատմության ամբիոնը՝ 29.12.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 13.01.2023:

[1] Լեո, Գրիգոր Արծրունի, հ. 2, Թիֆլիս, 1903, էջ 165:

[2] «Մշակ», 1878, 23 սեպտեմբերի, թ. 165, էջ 1:

«Մշակը» եվրոպական քաղաքական դեպքերը ոչ միայն հանգամանորեն լուսաբանում էր, այլև միաժամանակ վերլուծում էր, դիրքորոշում ցուցաբերում և գնահատական տալիս: Կառլոսյան պատերազմների լուսաբանումը «Մշակում» և դրանց վերաբերյալ թերթի գնահատականը հայ պատմագրությունում ուսումնասիրված չէ:

«Մշակը» Կառլոսյան պատերազմների պատճառների մասին:

«Մշակը Կառլոսյան պատերազմների պատճառներին անդրադառնալիս կարևորում է Իսպանիայի Նավարրա, Բասկոնիա, Կատալոնիա և Արագոն գավառներում միջնադարից պահպանված տեղական առանձնահատկությունները և գավառային անկախ իրավունքները՝ֆուերոսը: Այդ գավառներից յուրաքանչյուրը թերթի բնորոշմամբ՝ «մի անկախ փոքրիկ պետություն էր», որը թուլացնում էր թագավորական կենտրոնական իշխանությունը: Կառլոսյան պատերազմներն ընթացան «Աստված, հայրենիք, թագավոր և ֆուերոս» կարգախոսով, որի շուրջը համախմբվեցին մանր գյուղացիությունը, քաղաքային արհեստավորները, ազնվականությունը և կաթոլիկ հոգևորականությունը, որոնք իրենց համարում էին հին հասարակական ու տնտեսական կարգի կործանման զոհեր: «Մշակը» նոր ժամանակներում Իսպանիայում անվերջանալի խռովությունների գլխավոր պատճառը, բացի ֆուերոսից, իրավացիորեն համարում է նաև Բուրբոնների արքայատոհմի ներսում գահաժառանգման համար պայքարը: Դրա հիմքում ընկած էր Ֆերնանդո VII թագավորի՝ 1830 թ. ապրիլի «Գործնական արգելք» հրովարտակը, որը վերացնում էր գահաժառանգման մասին 1713 թ. Սալիական կարգը և գահաժառանգի բացակայության դեպքում թույլատրում գահակալել թագավորի ավագ աղջկան: 1833 թ. սեպտեմբերին Ֆերնանդո VII-ի մահից հետո գահն անցավ նրա մանկահասակ աղջկան՝ Իզաբելլա II-ին, որը «Մշակի» կարծիքով «հարմար առիթ էր թագավորի եղբոր՝ դոն Կառլոսի և նորա կուսակցութեան համար Իսպանիայի մէջ յեղափոխութիւն սկսելու»[1]: Կառլոսյան առաջին պատերազմի ավարտից հետո թագավորական իշխանությունը փորձեց «ոչնչացնել հին համայնքի և գավառների ուժը», բայց հաջողության չհասավ: Թերթը չի անդրադառնում 1846 թ. սկսված Կառլոսյան երկրորդ պատերազմին, որը Ֆերնանդո VII-ի և դոն Կառլոսի ժառանգների միջև ներարքայատոհմական ամուսնության ձախողման հետևանքն էր և 1849 թ. ավարտվեց Կառլոսականների պարտությամբ:

Կառլոսյան երրորդ պատերազմը

«Մշակը» Կառլոսյան երրորդ պատերազմը հանգամանորեն լուսաբանում է «Արտաքին լուրեր» բաժնում և «Արտաքին տեսությունում», որը վարում էր տաղանդավոր երիտասարդ լրագրող, Գ.Արծրունու բնութագրմամբ՝թերթի բոլոր աշխատակիցներից «մտավորապես ավելի զարգացած, մնացածներից ավելի եվրոպացի Պողոս Իզմայիլյանը»[2]: «Մշակը» գրում է, որ 1868թ. Իսպանիայում տեղի ունեցած «սաստիկ հեղափոխութիւնից հետո հասարակապետական կուսակցութիւնը ոյժ է ստանում»: Իզաբելլա II-ը իր գահը կորցնում է, իսկ հանրապետական Էմիլիո Կաստելորը հավաստիացնում է, որ «հին գավառական անկախ իրաւունքներին նայելով» կարելի է ասել, որ Իսպանիան «ընդունակ է հասարակապետութիւն կազմել»: Նա պնդում է, որ «Իսպանիայի

[1]«Մշակ», 1872, 11 մայիսի, թ. 18, էջ 3:

[2]Լեո, նշվ. աշխ., հ. 2, էջ 32, «Մշակի» քառասունամեակ (1872-1912), կազմեց Լ. Դանիելյան, Թիֆլիս, 1912, էջ 29:

քաղաքական կոչումը հասարակապետութիւն է»: Բայց է. Կաստելորը սխալվեց, Իսպանիան չպահպանեց «հասարակական քաղաքական ձևը և այժմ դարձեալ միապետութիւն է»[1]:

«Հեղափոխություն» ասելով «Մշակը» նկատի ունի Իսպանիայում 1868թ. սեպտեմբերյան քաղաքական հեղաշրջումը, որը իսպանական պատմագրությունում անվանում են «փառավոր հեղափոխություն»: Սեպտեմբերի 18-ին մարշալ Ֆրանսիսկո Սերրանոն, գեներալներ Խուան Պրիմը և Խուան Տոպետեն Կադիսում հակակառավարական ապստամբություն բարձրացրեցին, հռչակեցին «Իսպանիայի պատիվը» («Espana con bonra») մանիֆեստ: Այն քաղաքական ծրագիր չէր հռչակում, բայց երկրի կառավարման ձևը վերապահում էր Սահմանադիր կորտեսներին: Սեպտեմբերի 28-ին Ֆ. Սերրանոն հաղթեց կառավարական զորքին, իսկ Իզաբելլա թագուհին սեպտեմբերի 30-ին փախավ Ֆրանսիա: Հոկտեմբերի 18-ին ձևավորվեց լիբերալներից և առաջադիմականներից կազմված ժամանակավոր կառավարություն: 1869թ. հունիսի 1-ին ընդունվեց նոր սահմանադրություն, Իսպանիան հռչակվեց սահմանադրական միապետություն: Հունիսի 15-ին Ֆ. Սերրանոն կորտեսներում ընտրվեց գահի տեղապահ և կառավարության ղեկավար նշանակեց գեներալ Խուան Պրիմին: Հոկտեմբերի 3-ին դոն Կառլոսի թոռը՝ Մադրիդի դուքս դոն Կառլոս դե Բուրբոնը, հայտարարեց գահի նկատմամբ իր հավակնության մասին: 1869 և 1870 թթ. նրա համախոհները երկու անգամ ապստամբություն բարձրացրեցին գահին տիրելու նպատակով, բայց պարտություն կրեցին[2]:

«Մշակը» ճիշտ էր տեղեկացված, որ Ֆ. Սերրանոյի կառավարման ժամանակ փորձ արվեց Իսպանիայում հանրապետություն հռչակել: Բայց դա տեղի չունեցավ և երկու տարի անց, 1870թ. նոյեմբերի 16-ին, կորտեսներն Իսպանիայի գահին հավակնող բազմաթիվ թեկնածուներից նախապատվությունը տվեցին Իտալիայի թագավոր Վիտտորիո Էմանուիլ II-ի 25-ամյա որդի Սավոյայի արքայազն Ամադեոյին: Նա 1871թ. հունվարի 2-ին Խուան Տոպետեի գլխավորությամբ ձևավորեց «հաշտեցման կառավարություն», որի մեջ մտան նոր միապետությանն աջակցող բոլոր խմբերի ներկայացուցիչները[3]:

«Մշակի» պատմելով՝ Ամադեո I թագավորի «առաջին քայլերը նոր պատերազմում հանդիպեցին անհաղթելի արգելքների»: Թագավորին դեմ էր կաթոլիկ մոլեռանդ հոգևորականությունը, որը նրան չէր կարողանում ներել Իտալիայի թագավորի որդին լինելու համար: Այն թագավորի, ով Պիուս IX պապին զրկեց աշխարհիկ իշխանությունից, Հռոմը դարձրեց իր պետության մայրաքաղաքը և «սուրբ հորը գերի բռնեց Վատիկանի պալատի մէջ»: Ըստ թերթի՝ թագավորին դեմ էին բոլոր նրանք, ովքեր իրենց վիրավորված էին համարում, որ նա իսպանացի չէ, թվով 15 կուսակցություններ, ինչպես նաև հանրապետականները՝ միայն այն բանի համար, որ նա թագավոր է: Չնայած

---

[1]«Մշակ», 1872, 11 մայիսի, թ. 18, էջ 3:

[2]История Испании. Том 2. От войны за испанское наследие до начала XXI века, М., 2014, с. 327-331; История XIX века. Под ред. Лависса и Рамбо, т. 5, Москва,1938, с. 363; Майский И. М. Испания и Португалия 1808-1917, М., 1959, с. 138-140.

[3]История Испании, с. 327-334, Майский И. М. Указ. соч., 138-140; Испанские короли. Под ред. В. Л. Бернекера и др., Ростов-на-Дону, 1998, с. 377; История XIX века. т. 5, с. 366-367.

դրան՝ երիտասարդ թագավորը «բաւական ճարտարութեամբ պահպանում էր երկրի մէջ հավասարակշռութիւնը»[1] :

Իրականում Ամադեոյի համար երկրում քաղաքական հավասարակշռություն պահպանելը բավական բարդ խնդիր էր: 1872թ. կորտեսների ընտրությունների նախաշեմին հանրապետականները բացահայտ կոչեր էին անում՝ տապալել թագավորի իշխանությունը և հանրապետություն հռչակել: Դա երկրում սրեց ներքաղաքական դրությունը, որից դժգոհ կառլոսականները, թեպետ կորտեսներում 38 պատգամավորական տեղեր ստացան, բայց և այնպես դիմեցին բացահայտ խռովության: Նրանք արտասահմանում գտնվող դոն Կառլոսի թոռան՝ դոն Կառլոս դը Բուրբոն կրտսերի, հրահանգով 1872թ. ապրիլին ապստամբություն բարձրացրեցին: Այն սկսվեց Իսպանիայի հյուսիսում՝ Բիսկայա, Նավարրա գավառներում, ընդգրկեց Կատալոնիան, Արագոնը և վերածվեց կառլոսյան երրորդ պատերազմի: Պահպանողականները պահանջում էին Բուրբոնների արքայատոհմի վերահաստատումը, իսկ կառլոսականներին աջակցում էին գյուղական բնակչությունը և կաթոլիկ եկեղեցու մեծամասնությունը[2]:

«Մշակը» եվրոպական երկրներից ստացված լուրերով գրում է, որ դոն Կառլոս կրտսերը «փորձում է խռովութիւն ձգել» Իսպանիայում, որպեսզի Կառլոս VII անունով հաստատվի գահին: «Նորա դրոշակը և նախագիծը նման է իր հոր դրոշակին և քաղաքական նախագծին», որի հիմքում ընկած են սահմանադրությունը, գավառների հին իրավունքները և անկախությունը, միապետական ու եկեղեցական կարգը: Իր նպատակին հասնելու համար նա հենվում է «կղերական կուսակցութեան աջակցութեան և ստորին ժողովրդի ավանդութիւնների վրա»[3] :

«Մշակը» ճիշտ է ներկայացնում դոն Կառլոս կրտսերի նպատակը և նրան աջակցող ուժերին: Չանդրադառնալով պատերազմական գործողությունների մանրամասներին՝ թերթը գրում է, որ դոն Կառլոսին «չի հաջողվում «խռովութիւն գցել Իսպանիայում և իր ձեռքը գցել երկրի իշխանութիւնը»: Կառլոսականները և անձամբ դոն Կառլոսը, պարտություն են կրել մարշալ Ֆ. Սերրանոյի զորքից: Նրանց մեծ մասը ցրվել են, շատերը փախել են Ֆրանսիա, կամ գերի ընկել, իսկ պահպանված մի քանի խմբերը համառորեն պաշտպանվում են: Հունիսին ստացված լուրերով «Մշակը» գրում է, որ կառլոսականների ապստամբական գնդերը հայտնվել են Իսպանիայի հյուսիսային գավառներում, որոնց հրամանատարությունը ստանձնել է դոն Կառլոսը: Նրա դեմ ուղարկվել է կառավարական զորքը՝ ռազմական նախարար Ֆ.Սերրանոյի հրամանատարությամբ: Ըստ պաշտոնական տեղեկությունների և հեռագրական լուրերի՝ նա մի քանի հաղթանակ է տարել, իսկ դոն Կառլոսը և ապստամբական գնդերի հրամանատարներն ու սպաները փախել են Ֆրանսիա: Որոշ տեղերում կառլոսականները շարունակում են դիմադրություն ցույց տալ[4]:

«Մշակը» հավաստի տեղեկություն է տալիս ապստամբական ուժերի պարտության մասին Բիսկայայում և Նավարրայում, որոնք Կատալոնիայում պահպանեցին իրենց գինված խմբավորումները և 1872թ. վերջին վերսկսեցին պատերազմական գոր-

[1]«Մշակ», 1873, 1 մարտի, թիվ 8, էջ 3-4:
[2]Տե՛ս История Испании, с. 336-337; Испанские короли, с. 339.
[3]«Մշակ», 1872, 11 մայիսի, թիվ 18, էջ 3:
[4]«Մշակ», 1872, 18 մայիսի, թիվ 19, էջ 4, 1 հունիսի, թիվ 21, էջ 3:

ծողությունները: Թերթն անդրադառնալով Իսպանիայում ստեղծված դրությանը, այն համարում է բավական խառն ու անորոշ և դժվարանում է կանխատեսել, թե «ինչ հետևանք կունենա նրա ներքին անորոշ դրութիւնը»: «Մշակը» դա պայմանավորում է ընթացող կառլոսյան պատերազմով, Ամադեո I թագավորի ներքին քաղաքականությամբ, ով որպես «սահմանադրական համոզմունքներում մեծացած» երիտասարդ, երկրում ձևավորված քաղաքական իրադրությունում հարկադրված օգնություն է խնդրում կորտեսներում ներկայացված արմատական կուսակցությունից[1]: «Մշակը» նկատի ունի 1872թ. մայիսին առաջացած կառավարական հերթական ճգնաժամը, երբ Ամադեո I-ը պաշտոնանկ արեց կառավարության ղեկավար Պ. Սագաստային և իշխանության բերեց մարշալ Ֆրանսիսկո Սերրանոյին: Նա հյուսիսում կառլոսականներին հեշտությամբ հաղթեց, մայիսի 24-ին Ամորավյետոյում նրանց հետ համաձայնագիր կնքեց, որով ներում էր շնորհում ապստամբության բոլոր մասնակիցներին և նույնիսկ թագավորական բանակի դասալիքներին: 1872թ. հունիսի վերջին Ամադեո I-ը կառավարությունը վստահեց արմատական կուսակցության առաջնորդ Ռուիս Սորրիլային, ով պահանջեց ժամկետից շուտ արձակել կորտեսները: Թագավորը գնաց այդ հակասահմանադրական քայլին, որով վերջնականապես ի դեմ տրամադրեց նաև քաղաքական այլ ուժերին[2]:

«Մշակի» կարծիքով՝ Ռուիս Սորիլլայի կառավարությունը, թեև երկրում համակրանք չի վայելում, բայց նաև անհանգիստ չէ, որովհետև «վտանգավոր և ծանր հակառակորդ չունի»: Նա ջերմ հարաբերություններ է պահում միայն հանրապետական կուսակցության հետ, միայն այն բանի համար, որ իրեն հակառակորդ չի համարում, իսկ պահպանողական կուսակցությունն էլ չափազանց թույլ է: Ռ. Սորիլլայի կառավարության գործունեությունն ուղղված է տարբեր կուսակցություններից «գրգռված անվերջանալի մասնաւոր ապստամբությունների դեմ, որոնք ամբողջ երկիրը շարունակ տենդային դրութեան մէջ են պահում»[3]:

Թերթի դիտարկմամբ՝ 1872 թ. եվրոպական երկրներից ոչ մեկն «այնքան անընդհատ վրդովմունքների և խռովութեանց չենթարկվեցաւ, որքան որ Իսպանիան»: Եթե եվրոպական երկրներում ներքին հակասություններ առաջացան սահմանադրական հարցերի կամ տարբեր փոփոխությունների պատճառով, ապա Իսպանիայում «բոլոր խռովութիւնները գործի էին դրվում հեղափոխական շարժումներով»: Այս իմաստով Իսպանիան, թերթի կարծիքով, բացառություն է կազմում եվրոպական երկրների թվում, որտեղ դոն Կառլոսի «սպիտակ դրոշակ բարձրացնելը» և «ապստամբական ասպատակութիւնները», շարունակվում են մինչ օրս: Նա մի քանի անգամ «նշանաւոր հարվածներ կրեց» Ամադեո I թագավորի զորքից և «ամոթալի կերպիւ փախաւ կռուի դաշտից»: Թերթի կարծիքով դոն Ալֆոնսո դը Բուրբոնի գլխավորած կառլոսյան փոքրիկ գնդերը «ավելի աւազակների խմբին է նմանում, քան թէ մի որևիցե կուսակցութեան կառավարութեան դեմ մաքառող ապստամբական զորքի»[4]:

---

[1]«Մշակ», 1873, 18 հունվարի թիվ 2, էջ 3:

[2]История Испании, с. 338; Майский И. М. Указ. соч., с. 150-151.

[3]«Մշակ», 1873, 18 հունվարի, թիվ 2, էջ 3:

[4]«Մշակ», 1873, 25 հունվարի, թիվ 3, էջ 3:

«Մշակը» սրանով հստակ արտահայտում է իր դիրքորոշումը կառլոսյան պատերազմի նկատմամբ: Թերթի խմբագիր Գր. Արծրունին ազատամտականության առաջամարտիկ ու գաղափարախոս էր, ում համար եվրոպական քաղաքական իրադարձությունները կարող էին ուղենիշ և չափանիշ դառնալ արևմտահայության ազատաբաղձության ծրագրերում: Նա «Մշակի» աշխատակիցների առաջ խնդիր էր դնում լուսաբանել եվրոպական այն իրողություններն ու շարժումները, որոնք կօգնեն հայությանը վերափոխել իրենց մոտեցումներն ազատության ու անկախության համար մղվող պայքարում: Նա եվրոպական քաղաքական իրադարձությունները բարեխղճությամբ և հետևողականորեն լուսաբանում էր ոչ միայն դրանց «ժամանակագրական ստույգ հաջորդականությամբ, այլ ընտրողաբար, ըստ «Մշակի» ազատամտական նախասիրության»[1]: Գր. Արծրունին, որպես ազատամտական գաղափարախոս, կողմնակից էր հանրապետական Իսպանիային և ոչ թե միապետական: Բայց, քանի որ կառլոսականների պայքարը նպատակ էր հետապնդում գահազրկել երկրի օրինական միապետերին, նախ՝ Իզաբելլա II-ին, ապա կորտեսների կողմից ընտրված Ամադեո I-ին, ուստի Գր. Արծրունին պատերազմ սկսելու համար հանդիմանում է դոն Կառլոսին:

«Մշակը» պատերազմի ընթացքը լուսաբանելիս կարևորում է հատկապես Իսպանիայից ստացված պաշտոնական լուրերը, որոնք հիմնականում հայտնում էին թագավորական զորքերի հաջողությունների մասին: Թերթը, հավատալով այդ լուրերի իսկությանը, և ցանկանալով կառլոսականների պարտությունը, այնքան է հուսադրվում դրանցից, որ երբեմն ցանկալին ներկայացնում է որպես իրականություն: Բանն այն , որ պատերազմի սկզբում կառլոսականների բանակը չէր գլխավորում դոն Կառլոս կրտսերը, ով գտնվում է արտասահմանում և այնտեղից հրահանգներ էր ուղարկում իր համախոհներին: Հետևաբար, նա անձամբ պարտություն չէր կրում մարշալ Ֆ. Սերրանոյի զորքից և ոչ էլ «անամոթաբար» փախչում էր մարտի դաշտից, ինչպես ներկայացնում է «Մշակը»: Ավելին, Ամորավյետոյում կնքված զինադադարից հետո կառլոսականները համախմբվեցին և 1873թ. սկզբին դոն Կառլոսի կողմից գլխավոր հրամանատար նշանակված գեներալ Անտոնիո Դորրեգարայի գլխավորությամբ վերսկսեցին պայքարը:

«Մշակի» կարծիքով Ամադեո I թագավորի համար շատ հեշտ կլիներ կառլոսականների «այդ արիւնահեղութեանց մի զօրեղ հարուածով վերջ դնել, եթե երկրի սահմանադրական կեանքը ևս զանազան տատանմունքներով չը տարուբերվէր»: Մի քանի ամսում հինգ կառավարություն փոխվեց, որի ներկայիս ղեկավար Ռուիս Սորիլլան աշխատում է տարբեր բարեփոխումներ անցկացնելով «բարեկարգել երկրի անմխիթար դրութիւնը»[2]:

«Մշակը» ճիշտ է ներկայացնում Իսպանիայի ներքաղաքական անկայուն վիճակը: Ամադեո I թագավորի կառավարման երկու տարվա ընթացքում երեք անգամ կորտեսներ վերընտրվեցին, վեց կառավարություն փոխվեց, իսկ բարեփոխումները մնացին անկատար: Ամադեոն երկրի քաղաքական ուժերի և հասարակության լայն խավերի կողմից բացարձակ աջակցություն չուներ: Ամադեոյին, ի սկզբանե ծայրահեղ սառը վերաբերմունք դրսևորած իսպանացիները, համարում էին թույլ, փոքրոգի, քաղաքական

---

[1]Լ. Գևորգյան, Գրիգոր Արծրունին և նրա «Մշակը», Երևան, 1996, էջ 45:
[2]«Մշակ», 1873, 25 հունվարի, թիվ 3, էջ 4:

կամք չունեցող օտարերկրացի միապետ: Իրականում նա ոչ միայն ստեղծված հանգամանքների գերի էր, այլև «քաղաքական իմաստով Իսպանիայի առաջին ժողովրդավարական միապետը»[1]: XIX դարի իսպանական ականավոր գրող Բենիտո Պերես Գալդոսի կարծիքով Ամադեոն «արեց այն, ինչ կարող էր: Նա միշտ գործում էր անկողմնակալ և բարի կամքով: Նա արիության, խիզախության մարմնավորում էր, առանց կեղծ ստվերի և երեսպաշտության, խստագույն սովորությունների մարդ էր, ավելի շատ զինվորական, քան քաղաքագետ»[2]: Չցանկանալով դառնալ քաղաքական խարդավանքների գերի և հավանություն տալ կառավարության բոլոր քայլերին՝ Ամադեո I-ը 1873թ. փետրվարի 10-ին հրաժարվեց գահից ու մեկնեց Իտալիա: Նույն օրը հանրապետականները կառավարությանը վերջնագիր ներկայացրին՝ պահանջելով անհապաղ հանրապետություն հռչակել: Կորտեսներն իրենց հայտարարեցին Ազգային ժողով և ձայների մեծամասնությամբ Իսպանիան հռչակեցին հանրապետություն: 1873թ. մարտի 11-ին հանրապետական էստանիսլաո Ֆիգերասը նշանակվեց Իսպանիայի նախագահ[3]:

«Մշակի» կարծիքով ստեղծված իրադրությունում «թագավորին ուրիշ ավելի խելացի և ազնիվ ելք չէր մնում, եթե ոչ հրաժարվել գահից»: Թերթը չի կիսում է. Ֆիգերասի լավատեսությունը, թե «հանրապետութիւնը հաստատեցաւ Իսպանիայում մշտնջենականութեան համար և որ նա օրինակ կլինի մնացած Եվրոպայի համար»: Ըստ թերթի՝ Իսպանիան ապագայում հազիվ թե կայուն վիճակ ունենա, քանի որ Ֆրանսիայի հետ հարաբերությունները առաջվա նման չեն, կառլոսյան պատերազմն ավարտված չէ և «նորահաս հանրապետութեանը սպասում են անթիւ կռիւներ Կարլոսեան շարժման մեջ կերպարանավորված հնացած կաթոլիկութեան հետ»[4] :

«Մշակի» տեղեկություններով թագավորի հրաժարականը Իսպանիայի ներքին վիճակը չկայունացրեց, հանրապետություն հռչակվեց, քանի որ երկիրը «մնացել էր առանց հովվի և պէտք է ինքը տնօրինէ իւր վիճակը»: Երկրի ղեկավարման հարցում իրենց ծառայություններն առաջարկում էին «մի քանի հին հովիվներ», մասնավորապես՝ Դոն Կառլոսը, Իզաբելլա թագուհու որդի Ալֆոնսը, դուքս Մոնպասիեն, իսկ որոշ «խեղկատակներ» կրկին առաջադրում են Պրուսիայի թագավորի ազգականին: Իսպանացիները հրաժարվեցին բոլորի ծառայություններից, որովհետև վստահ չեն, որ երկու-երեք տարի հետո նրանք չեն հեռանա երկրից, կամ էլ իրենց չեն հեռացնի: Այս տրամաբանությունից ելնելով, շարունակում է դատողություններ անել «Մշակը», «Իսպանիան վճռեց հասարակապետութիւն հաստատել իւր մէջ: Ասած ու կատարած, հասարակապետութիւնը հիմնուած է»[5]:

1873թ. հունիսի 10-ին կորտեսները Իսպանիան հռչակեցին ժողովրդավարական դաշնային հանրապետության, որն ամենևին իսպանացիների ցանկությունը չէր և ոչ էլ մեծամասնության որոշումը, այլ պայմանավորված էր ներքաղաքական վիճակով: Հանրապետականների առաջնորդ էմիլիո Կաստելարի բնորոշմամբ՝ միապետությունը

[1]Испанские короли, с. 368.

[2]История Испании, с. 339.

[3]История Испании, с. 339-340; Испанские короли, с. 378-384; Майский И. М. Указ. соч., с. 140-141.

[4]«Մշակ», 1873, 1 մարտի, թիվ 8, էջ 4:

[5]«Մշակ», 1873, 5 ապրիլի, թիվ 13, էջ 3:

«ոչ ոք չկործանեց, ոչ ոք նաև հանրապետություն չհաստատեց, դա տեղի ունեցավ իրադարձությունների հետևանքով[1]:

«Մշակի» դիտարկմամբ՝ Իսպանիան ձգտում է դաշնային հանրապետության, «ժողովուրդը երևակայական հանրապետութեան գաղափարով յափշտակված է և պահանջում է դաշնակցական հանրապետութիւնը իր բոլոր հետևանքներով»[2]: Իրականում հանրապետության հռչակման հարցում քաղաքական ուժերը, նույնիսկ հանրապետականները, միասնական չէին: Խորհրդարանում հանրապետության օգտին քվեարկած պատգամավորները, ինչպես նաև ժողովուրդը, երկրի կառավարման լավագույն ձևը համարում էին միապետությունը: Բայց քանի որ Ամադեո Սավոյացու կարճատև կառավարումը հիասթափեցրեց շատերին, անգամ համոզված միապետականներին, ստեղծված իրադրությունում միապետության պահպանման իրական հեռանկար չէին տեսնում: Հանրապետականների մի մասը կողմնակից էր դաշնային պետությանը, մյուսները՝ միութենական հանրապետությանը: Իսպանական հանրապետությունը միջազգային ճանաչում չգտավ: Եվրոպական պետություններից այն ճանաչեց միայն Շվեյցարիան, ինչպես նաև ԱՄՆ-ը, Կոստա Ռիկան և և Հոնդուրասը[3]:

«Մշակը» նկատում է, որ չնայած Իսպանիայում հանրապետություն հռչակվեց, բայց անորոշ վիճակ է ստեղծվել, խռովություններն ու անարգությունները շարունակվում են: Թերթն իրավացի է. ձախ հանրապետականները չճանաչեցին 1873թ. մարտի 11-ին նախագահ նշանակված Էստանիսլաո Ֆիգերասի կառավարությունը և ուժով տեղերում վերցրեցին իշխանությունը: Ապրիլի 23-ին արմատականները փորձեցին պետական հեղաշրջում իրականացնել, որը կանխեց հանրապետության նախագահի պաշտոնակատար Ֆրանսիսկո Պի-ի-Մարգալը: Կատալոնիայում հանրապետություն հռչակվեց, որը տեղի հանրապետականներն ընկալեցին որպես անկախ պետության ստեղծման ազդանշան: Շատ քաղաքներ իրենց անկախ հայտարարեցին կենտրոնական իշխանությունից, իսկ հանրապետության հակառակորդ կառլոսականները կտրուկ ակտիվացրին պատերազմական գործողությունները: Մայիսին Ա. Դորրեգարը կառավարական զորքի նկատմամբ հաղթանակ տարավ Պամպլոնայի տակ, կառլոսականներն վերահաստատեցին իրենց ազդեցությունը Նավարրայում, Բիսկայայում, Գիպուսկոայում, Բասկերի երկրում[4]:

«Մշակը» Մադրիդից ստացված լուրերով գրում է, որ ապստամբները 1873թ. հունիսին պաշարել են Կարտախենան և կառավարական զորքերին մի շաբաթվա մեջ ամենուրեք ջախջախել: Դոն Կառլոսը կրկին վերադարձել է Իսպանիա, մեծ ընդունելություն գտել իր կողմնակիցների շրջանում և ստանձնել բանակի հրամանատարությունը[5]: Հուլիսի կեսերին Իսպանիա վերադարձած դոն Կառլոսը մի քանի հաղթանակ տարավ, բայց Կատալոնիայում հաջողության չհասավ, թեև իր տրամադրության տակ ուներ 12 հազար զորք[6]: Եվրոպական մամուլից այդ մասին իրազեկ «Մշակը» գրում է,

---

[1]История Испании, с. 339-340; Майский И. М. Указ. соч., с. 141-142.
[2]«Մշակ», 1873, 12 հուլիսի, թիվ 26, էջ 3:
[3]История Испании, с. 341, 346.
[4]История Испании, с. 340-341; Майский И. М. Указ. соч., с. 147-148, 151.
[5]«Մշակ», 1873, 12 հուլիսի, թիվ 26, էջ 3, 19 հուլիսի, թիվ 27, էջ 4:
[6]История Испании, с. 342-344; Майский И. М.. Указ. соч., с.147-148.

որ Իսպանիայի սահմանները բաց են կառլոսականների առջև, ովքեր առավել համարձակություն են ձեռք բերել դոն Կառլոսի՝ Իսպանիա գալուց և Ինգվալադա քաղաքը գրավելուց հետո: Պահպանողական կուսակցությունն արդեն խոսում է Կառլոս VII-ի գահին նստելու մասին: Պաշտոնական լուրերը հայտնում են, որ կառլոսականները 26 հազար հետևակ, 450 հեծյալ և 17 հրանոթ ունեն: Կառավարական 12 հազար զորքը Բալբասի մոտ «նշանավոր հաղթանակ» է արել, դոն Կառլոսը «հուսահատված քաշվել է դեպի անառիկ սարերը»: Իսպանիայի հյուսիսում կառլոսականների դեմ «վարած պատերազմը անորոշ դրութեան մէջ է գտնվում»: Հեռագրական լուրերը հայտնում են, գրում է «Մշակը,» որ գեներալ Դոմինգո Մորիոնեսը հաղթել է կառլոսականներին, բայց այլ լուրերով նա քաշվել է դեպի Լոս Արկոս, փոխանակ դոն Կառլոսին պաշարի էստելիա քաղաքում[1]:

1873 թ. ամռանը և աշնանը ներքաղաքական իրադրությունն Իսպանիայում բավական բարդ էր, կառավարության իշխանությունը Մադրիդից այն կողմ չէր տարածվում: Սեպտեմբերի սկզբին նախագահի պաշտոնը ստանձնած Էմիլիո Կաստելարի ձեռնարկած քայլերը բավարար չեղան կառլոսականներին պարտության մատնելու համար, որոնց քաղաքական և ռազմական աջակցություն էին ցույց տալիս հանրապետական Իսպանիայի դեմ թշնամաբար տրամադրված Անգլիան ու Ֆրանսիան: Չնայած դրան 1873 թ. հոկտեմբերի 10-ին Կարտախենայի ծովածոցում կառլոսականները անգլիական, ֆրանսիական և գերմանական նավատորմերի աջակցության ու դեսանտի աջակցության պայմաններում լուրջ հաջողություն չունեցան: Տարեվերջին 24 հազար զորք ունեցող կառլոսականները զավթեցին էբրո գետից հյուսիս ընկած բոլոր տարածքները՝ ընդհուպ մինչև Ֆրանսիայի հետ սահմանը և 1874 թ. սկզբին պաշարեցին Բիլբաոն: Փետրվարին կառավարության ղեկը կրկին ստանձնած Ֆ. Սերրանոն գնաց հյուսիս և անձամբ գլխավորեց կառլոսականների և կանտոնականության դեմ պայքարը, հաղթահարեց դրա վերջին հենարան Կարտախենայի դիմադրությունը[2]:

«Մշակի» դիտարկմամբ՝ 1874 թ. գարնանը թվում էր, թե պատերազմն ավարտվում է, բայց «այժմ նորից սասկանում է»: Թերթը կարծիք է հայտնում, որ եթե անգամ կառլոսական զորքը օրերս հաղթանակ տանի Կանտաբրիայում, դա չի նշանակում, թե Իսպանիայի գահը կանցնի դոն Կառլոսին: Ստացված նոր լուրերով թերթը գրում է, որ «քաղաքական պատերազմը Իսպանիայում, կարծես թե բաղդաւոր վերջ է ստանում»: Մայիսի 2-ին Մադրիդի բնակիչներին «ուրախալի լուր հասավ», որ կառավարական զորքերը մարշալներ Ֆ. Սերրանոյի և Մ. Կոնչայի գլխավորությամբ չորսօրյա կռիվներից հետո հաղթել են դոն Կառլոսին և ազատագրել պաշարված Բիլբաոն: Քաղաքի բնակիչների «ոգևորությունը անասելի էր» գրում է թերթը, կառլոսյան զորքը Դուրանգոյի ուղղությամբ քաշվում է դեպի լեռները, որին անդադար հետապնդում է հանրապետության զորքը: Վալենսիայում և Կատալոնիայում կառլոսականները կրկին անհաջողություն են ունեցել, հունիսի 18-ին, Ալկորայի մոտ, նրանց 12 հազար զորքը պարտություն է կրել: Էստելիայի կռվում սպանվել է թագավորական զորքի հրամանատարներից ազգությամբ լեհ մարշալ Մ.Կոնչան, որին փոխարինել է գեներալ Սաբոլանը[3]:

---

[1]«Մշակ», 1873, 9 օգոստոսի, թիվ 30, էջ 4, 30 օգոստոսի, թիվ 33, էջ 4, 29 նոյեմբերի, թիվ 47, էջ 3:
[2]Майский И. М. Указ. соч., с. 151; История Испании, с. 344-345.
[3]«Մշակ», 1874, 30 մայիսի, թիվ 21, էջ 3, 20 հունիսի, թիվ 25, էջ 3:

Ֆ. Սերրանոն չնայած վերացրեց Բիլբաոյի պաշարումը, բայց չկարողացավ կառլոսականների դեմ հաջողության հասնել Բասկոնիայում, Նավարրայում և Կատալոնիայում: Դոն Կառլոսը համախմբեց իր ուժերը և 1874թ. հուլիսին իր զորքով նույնիսկ հասավ մինչև Մադրիդի արվարձանները: Բիլբաոյի անհաջող պաշարումից հետո նա գրաված էստելիան հայտարարեց իր մայրաքաղաքը, ձևավորեց արքունիք ու կառավարություն: Ֆ. Սերրանոն կորցրեց վերահսկողությունը Մադրիդի վրա, որտեղ ուժգացավ միապետականների ազդեցությունը, իսկ գավառներում կրկին ակտիվացան կառլոսականները[1]: «Մշակը» գրում է, որ մարշալ Մ. Կոնչայի մահից հետո նրա զորքերը ետ քաշվեցին, որի հետևանքով «առանց այն էլ յանդուգն կառլոսաեանները աւելի համարձակութիւն ստացան»: Նրանք դոն Ալֆոնսոյի գլխավորությամբ գրավեցին Կուինոա քաղաքը, որը «վերին աստիճանի անգթութեամբ ավերեցին, սպանեցին կանանց և երեխաներին» ու 700 հոգի գերի վերցրեցին, որոնց հետո կառավարական զորքերն ազատ արձակեցին: «Այսպիսի վայրենի, անգութ մարդիկ», գրում է «Մշակը», հովանավորություն են ստանում Ֆրանսիայի կողմից, որը թեպետ բացարձակ չէ, բայց դա չի նշանակում, որ կարելի է պաշտպանել պատերազմող մի կողմի: Ֆրանսիայի կառավարությունը թույլատրում է իր երկրի սահմանն անցնել կառլոսականների ղեկավարներին ու զորքին, զենք տեղափոխել իր սահմանով, որը պետք է կիրառվի «մի բարեկամ կառավարության դեմ»[2]: Մակ Մահոնի կառավարությունը ներողամտություն է դրսևորում կառլոսականների նկատմամբ, մինչդեռ Անգլիան ուշադրություն դարձրեց այս իրողությանը, իսկ Գերմանիան ռազմանավեր ուղարկեց Իսպանիայի ափերի մոտ: Այդ ժամանակ միայն Ֆրանսիան փորձեց արդարանալ, այն էլ՝ շատ թույլ հիմնավորումով: Ֆրանսիական կառավարությունն, իսկապես, հովանավորում և աջակցում էր դոն Կառլոսին[3], որը «Մշակը» հիմնավորում է՝ ներկայացնելով ֆրանսիական կիսապաշտոնական մի լրագրի հրապարակումը: Ըստ այդ թերթի՝ Ֆրանսիան չի կարող արգելել իր երկրում ապրել դոն Կառլոսի գործին համակրող մարդկանց, որոնք ոչինչ չեն անում Իսպանիայի կառավարության դեմ: Ֆրանսիան մեղավոր չէ, որ զենքը ստացվում է սահմանի վրա գտնվող գետի այն մասով, որը պատկանում է Իսպանիային[4]:

Մինչ այսպես ներքին պատերազմից երկիրը տանջվում է, գրում է «Մշակը», Մադրիդի բնակչները «բոլորովին անվրդով» քաղաքի սրճարաններում սպասում են լուրերի, կարծես այդ բոլորն իրենց չի վերաբերում: Կուսակցությունների ղեկավարներն էլ «չեն մտածում միանալ, վերջ տալ վնասակար պատերազմին և յետոյ պարապել իրանց գործերով կառավարութեան ձրի առիթով»[5]:

«Մշակը» հայտնում է, որ եվրոպական գրեթե բոլոր պետությունները պաշտոնապես ճանաչել են հանրապետական Իսպանիայի կառավարությունը: Ըստ թերթի՝ դա շատ «օգուտներ կբերէ այդ երկրին», գուցե կառավարության զորքերն առավել հաջող շարունակեն իրենց գործը, որովհետև այժմ Իսպանիայի «դեսպանները կարող են պահանջել բոլոր պետութիւններից, որ նոքա ներողամիտ չը լինեն դեպի կարլոսեաննե-

---

[1]Дебидур А. Дипломатическая история Европы: От Венского до Берлинского конгресса (1814-1878), Ростов-на-Дону 1995, т. II, с. 408; Майский И. М. Указ. соч., с. 151-152.

[2]«Մշակ», 1874, 8 օգոստոսի, թիվ 31, էջ 3:

[3]Տե՛ս Дебидур А. Указ. соч., с. 408.

[4]Տե՛ս «Մշակ», 1874, 8 օգոստոսի, թիվ 31, էջ 3:

[5]Նույն տեղում:

ը»[1]: «Մշակի» կարծիքով Իսպանիայի կառավարությունը ճանաչելուց հետո, «կառլոսյանները ոչ այլ ինչ են, եթե ոչ խռովարարներ»[2]: Այս բանը լավ հասկանում է Ֆ. Սերրանոն և «կասկած չկա, որ նա օգուտ կքաղի այդ իրողութիւնից»[3]: Ֆ. Սերրանոյի իշխանության գալն առաջինը ողջունեց Պրուսիայի կանցլեր Օ. ֆոն Բիսմարկը, ով 1874թ. օգոստոսին ճանաչեց նրա կառավարությունը և հասավ այն բանին, որ եվրոպական կաբինետների մեծ մասը հետևեց իր օրինակին[4]: «Մշակի» հույսերը չարդարացան, քանի որ Ֆ. Սերրանոն չկարողացավ հավուր պատշաճի օգտվել եվրոպական պետությունների դիվանագիտական աջակցությունից՝ Իսպանիայում ներքաղաքական վիճակի անկայունության պատճառով:

Կառլոսյան պատերազմի ընթացքը լուսաբանելիս «Մշակը», թեև օգտվում է տեղեկատվության տարբեր աղբյուրներից և արտաքուստ փորձում է անկողմնակալ լրատվության տպավորություն թողնել, բայց ավելի շատ կարևորում է իսպանական պաշտոնական լուրերը, որոնք պարբերաբար հայտնում էին հանրապետության զորքերի հաջողությունների մասին: Իսպանիայից ստացված նոր լուրերով «Մշակը» գրում է, որ կառլոսականները չեն դադարում հրետակոծել Պյուիսերդա քաղաքը, որն իրականացնում են գեներալներ Ֆրանսիսկո Սեբալոսը և Ռաֆայել Տրիստանին: Ամբողջ քաղաքը պաշտպանվում է, վերջերս քաղաքի բնակիչները հարձակվել են կառլոսականների վրա ու նրանց լուրջ կորուստներ պատճառել: Օգոստոսի 25-ին քաղաքի պաշարումն ավարտվեց, որի բնակիչները ոգևորությամբ ընդունեցին հանրապետության զորքը: Գեներալ Էստեբանը երկու անգամ ջախջախեց կառլոսականներին, որոնք կոցրեցին 700 մարդ[5]:

Շարունակելով ընդգծել կառլոսականների անհաջողությունները՝ «Մշակը» գրում է, որ նրանց զորքի մեջ մեծ երկպառակություն է ծագել: Զորքի գլխավոր հրամանատարները դոն Կառլոսից պահանջում են պաշտոնանկ անել գեներալ Անտոնիո Դորրեգարային, բայց նա չի համաձայնվում: Այդ պատճառով դոն Կառլոսի և գեներալ Ռամոն Կաբրերայի միջև տարաձայնություններ առաջացան, նրա կողմնակիցներից շատերը զորքը լքեցին, անցան Ֆրանսիայի սահմանը[6]: «Մշակի» լրատվությամբ՝ 1874թ. նոյեմբերի 10-11-ին գեներալներ Լոման, Լասերնան, Օրիոնեսը և Բլանկոն շրջապատեցին դոն Կառլոսի զորքին: Իրուն քաղաքի պաշարումն ավարտվեց: Հանրապետական զորքը զայրացած ավերեց քաղաքում գտնվող դոն Կառլոսին պատկանող բոլոր շինությունները[7]:

Պատերազմող կառլոսականներին «Մշակը» համեմատում է վայրենների հետ, որոնք թալանում են խաղաղ բնակչությանն ու ամենուրեք ավերածություններ կատարում: Թերթն այս անգամ չի խուսափում հայտնել, որ հանրապետության զորքը կառլոսականների դեմ պայքարում նույնպես դիմում է այդ քայլին: «Մշակը» ցանկանում էր հանրապետության զորքի հաղթանակը և որքան էլ պատերազմում նրանց տարած հա-

---

[1]«Մշակ», 1874, 29 օգոստոսի, թիվ 34, էջ 3:
[2]«Մշակ», 1874, 29 օգոստոսի, թիվ 34, էջ 3, 19 սեպտեմբերի, թիվ 37, էջ 3:
[3]«Մշակ», 1874, 29 օգոստոսի, թիվ 34, էջ 3:
[4]Дебидур А. Указ. соч., т. II, с. 412.
[5]«Մշակ», 1874, 19 սեպտեմբերի, թիվ 37, էջ 3:
[6]«Մշակ», 1874, 26 սեպտեմբերի, թիվ 38, էջ 3:
[7]«Մշակ», 1874, 21 նոյեմբերի, թիվ 47, էջ 3:

ջողությունների մասին հուսադրող լուրեր է տպագրում, այնուամենայնիվ 1874թ. կառլոսականները դեռևս պարտված չէին: Հանրապետությունը նրանց դեմ 10 հազար զորք էր դուրս բերել, որը կարողանում էր միայն ռազմի դաշտի ճակատը պահել և ի վիճակի չէր հակառակորդին ջախջախել:

«Ամբողջ լուսաւորյալ աշխարհը, - գրում է «Մշակը»,- զարմացած նայում է Իսպանիայի արիւնահեղ և անվերջանալի ներքին երկպառակութիւնների վրա»: Ընթերցող հասարակության մեծ մասը թե Եվրոպայում, թե Ռուսաստանում և թե մեզանում սկզբում հետաքրքրվում էր «այդ սարսափելի եղբայրասպան պատերազմով», մեծ ուշադրությամբ հետևում էր, թե ինչ ավարտ կունենա կառլոսականների և հանրապետության կռիվը: Բայց այդ պատերազմն այնքան երկար է շարունակվում, որ անգամ քաղաքագետներից շատերը, «որոնց ուշադրութիւնը լարված էր այդ արիւնահեղ անցքերով, սկսում են անտարբերութիւն ցոյց տալ Սպանիայում պատահող երևույթներին»: Նրանցից շատերը նայում են «այդ թշվառ յուսահատ պատերազմի վրա որպես ծնվող հանրապետութեան և մեռնող միապետութեան յուսահատ պատերազմի վրա... Շատերը համարում են այդ երկպառակութիւնը մէկ տեսակ կռիւ գոյութեան համար նոր և հին քաղաքական սկզբունքների մէջ»: «Մշակի» բնորոշմամբ՝ Իսպանիայի «ներքին երկպառակութիւնը ներկայացնում է պատերազմ՝ նոր գաղափարների՝ հին գաղափարների դեմ, առաջադիմութեան և խաւարի դէմ, ազատամիտ կուսակցութեան՝ անդրալեռնայիների, այսինքն կղերականների դեմ..»[1]:

Եթե ուշադիր վերլուծենք Իսպանիայում տեղի ունեցող «տխրալի երևույթները, որոնք երկար ժամանակ ավերում են խեղճ երկիրը», շարունակում է դատողություններ անել «Մշակ», ապա կհամոզվենք, որ մարշալ Ֆ. Սերրանոյի գլխավորած կուսակցությանը «բոլորովին չէ կարող առաջադիմութեան և նոր գաղափարների ներկայացուցիչ համարել»: Ֆ. Սերրանոն պատերազմելով կառլոսյան կղերական կուսակցության դեմ, «ակամա գործիք է դառնում ազատամիտ սկզբունքների և ստիպված է ներկայացուցիչ լինել հանրապետական քաղաքական ձևի»: «Մշակի» դիտարկմամբ՝ մարշալ Ֆ. Սերրանոն և նրա կուսակցությունը հաղթելով կառլոսականներին՝ «սարսափում են իրենց վճռական քայլերից» և ամեն անգամ կառլոսականներին հաղթելուց հետո «սկսում են ավելի անորոշ, ավելի մեղմ գործել»: Ֆ. Սերրանոն շատ լավ գիտի, գրում է «Մշակը», որ «ազնիվ հանրապետականները նրա առաջին թշնամին են, ազգը միայն նրան է համարում պատերազմական ուժ»: Թերթը Ֆ. Սերրանոյին անվանում է «ազգի և հայրենիքի երևեի հարստահարողը», ով լավ է հասկանում է, որ ինքը հայրենիքին պետք է այնքան ժամանակ, քանի դեռ պատերազմը շարունակվում է: «Մշակի» կարծիքով պատերազմը վերջանալուն պես Ֆ. Սերրանոն մի րոպե չի մնա կառավարությունում, որի ղեկը պետք է հանձնի ուրիշներին, որովհետև «զգում է, թե անընդունակ է խաղաղ, նորոգող, առաջադեմ կառավարչական գործունեութեանը»[2] :

«Մշակն» իրավացի է այնքանով, որ 1874թ. Իսպանիայում հաստատված արտակարգ դրության պայմաններում Ֆ. Սերրանոն երկիրը կառավարում էր գեներալներ Մանուել Պավիայի ու Մարտինես Կամպոսի հետ և փաստացի զինվորական բռնապետություն էր հաստատել: Հանրապետությունը վարկաբեկվել էր, կառավարման ձևը

[1]«Մշակ», 1874, 12 դեկտեմբերի, թիվ 50, էջ 3:
[2]Նույն տեղում:

դարձել էր երկրի քաղաքական հիմնական խնդիրը: 1874թ. դեկտեմբերի 29-ին Սագունտոյում պրոնունսիամենտոյի գեներալ Մարտինես Կամպոսի աջակցությամբ գահազրկված Իզաբելլա թագուհու որդին՝ 17-ամյա դոն Ալֆոնսոն, հռչակվեց Իսպանիայի թագավոր: Նա 1875թ. հունվարի 2-ին մտավ խանդավառված Մադրիդ, Ֆ. Սերրանոն կառավարությունը հանձնեց թագավորի պաշտոնական ներկայացուցիչ Կանովասին և լքեց երկիրը[1]:

Անդրադառնալով XIX դարում Իսպանիայում երրորդ անգամ միապետության վերականգմանը՝ «Մշակը» կարծիք է հայտնում, որ Իսպանիան «վերջապես կարծես հասել է մի որոշ քաղաքական դրութեան»: Թագավոր է ընտրվել տարիքով «կարելի է ասել դեռ երեխա, իսկ մտաւոր զարգացմամբ և քաղաքական համոզմունքներով դեռ անորոշ, անայստ մի էակ»: Նա թեև լավ դաստիրակություն և կրթություն է ստացել, հեռու է պալատական ու կղերական ազդեցությունից, բայց դա բավարար չէ երկիրը կառավարելու համար: Նա վերադառնալով հայրենիք, կարող է շատ հեշտությամբ ենթարկվել կղերական կուսակցության ազդեցությանը: Այն շատ հզոր է Իսպանիայում, մանավանդ հիմա, երբ ներկայիս կառավարության ղեկավարը կղերական կոմս Կանովաս դել Կաստիլիոն է[2]: «Մշակը» սխալմամբ Կ. Կանովասին անվանում է կղերական գործիչ, ով երիտասարդ տարիներին լիբերալ էր: 1875թ. նա դարձավ պահպանողական կուսակցության առաջնորդը և Ալֆոնսոյի միապետության տարիներին կարևոր դեր խաղաց Իսպանիայի քաղաքական կյանքում[3]: Թերթը ճիշտ է հասկանում, որ իսպանացիների «մեծ մասը դեռ հոգով միապետական է և չէ սիրում հանրապետութիւնը, որի անունը կոտրեցին անընդունակ առաջնորդները»: Բայց չի կարելի ասել, գրում է «Մշակը», որ «իսպանացին համակրեր այնպիսի միապետութեան, որ պետք է ձեռք ձեռքի գնայ կղերականների հետ»[4]:

Թերթի պատկերացմամբ ստեղծված իրադրությունում Իսպանիան ընտրության երկու ճանապարհ ուներ. կամ ընտրում էր 1869թ. սահմանադրությանը հետևող «մի ազատամիտ միապետություն, կամ մի սև, ճնշող, կղերական, պապական, անսխալական ինքնակալութիւն»: Այլ կերպ ասած, Իսպանիան պետք է ընտրություն կատարեր երիտասարդ Ալֆոնսոյի և դոն Կառլոսի միջև: Իսպանիան ընտրեց Ալֆոնսոյին՝ մոռանալով, որ նա ներկայացնում է Բուրբոնների արքայատոհմը, մոռացավ, որ Ալֆոնսոն մի քանի տարի առաջ իրենց կողմից գահազրկված Իզաբելլա թագուհու որդին է: Իսպանիան գնաց այդ քայլին, որպեսզի «արմատախիլ անի միջնադարյան կղերական բնավորութեամբ լի, ինկվիզիցիան պաշտպանող դոն Կառլոսի կուսակցութիւնը»[5] :

«Մշակը» ճիշտ է ընկալում, որ կառլոսյան պատերազմը հնի ու նորի, առաջադիմության և հետադիմության միջև պայքար է, որը բխում է նաև կաթոլիկ եկեղեցու շահերից: Դա լավ էր հասկանում նաև երիտասարդ Ալֆոնսո XII թագավորը, ով Մադրիդ ժամանելու ութերորդ օրը՝ 1875թ. հունվարի 10(22)-ին մանիֆեստով դիմեց կառլոսա-

---

[1]История Испании, с. 371-372; Испанские короли, с. 393; Майский И. М. Указ. соч., с.149; Дебидур А., Указ. соч., с. 413.

[2]«Մշակ», 1875, 23 հունվարի, թիվ 3, էջ 4:

[3]Майский И. М. Указ. соч., с. 158-159; История Испании, с. 371, 375.

[4]«Մշակ», 1875, 23 հունվարի, թիվ 3, էջ 4:

[5]«Մշակ», 1876, 4 նոյեմբերի, թիվ 42, էջ 3:

կաններին: Նրանում ասվում էր. «Եթե դուք պայքարում եք թագավորության գործի համար, ապա ես հանդիսանում եմ այն արքայատոհմի ներկայացուցիչը, որին հավատարմության երդում են տվել ձեր հայրերը: Եթե դուք պայքարում եք կաթոլիկ կրոնի համար, ապա ես կաթոլիկ թագավոր եմ և կվերացնեմ եկեղեցու պատճառած բոլոր անարդարությունները»[1]:

Կառլոսյան պատերազմում կաթոլիկ եկեղեցու խնդիրը կարևորող «Մշակը» գրում է, որ երիտասարդ թագավոր Ալֆոնսո XII-ը գահին անցնելով եվրոպական բոլոր պետություններին հղած շրջաբերականում «պաշտոնապես հայտարարել է, որ թույլ չի տա կաթոլիկ կրոնքը քաղաքականության գէնք դառնալ»[2]:

Ձենք վերցրած կառլոսականներին Ալֆոնսո XII-ը խոստանում էր լիակատար համաներում և հյուսիսային գավառների հին իրավունքների վերահաստատում: Թագավորի մանիֆեստին կառլոսականները ականջալուր չեղան և շարունակեցին պայքարը: 1875թ. սկզբում նրանք վերահսկում էին Արագոնի, Կատալոնիայի, Վալենսիայի, Նավարայի և Բասկերի երկրի տարածքի մի մասին: Կառլոսականների դեմ պայքարը 1875թ. փետրվարին անձամբ գլխավորեց երիտասարդ թագավորը, որի զորքը կարողացավ ետ վերադարձնել զգալի տարածքներ, ազատագրեց Պամպլոնան:

1875թ. ապրիլին վերլուծելով պատերազմի ընթացքը՝ «Մշակը» նկատում է, որ պատերազմող կողմերը իրարամերժ լուրեր են տարածում: Ալֆոնսո թագավորի կողմնակիցները հավաստիացնում են, որ կառլոսյան զորքից գեներալներ և սպաներ են անցել իրենց կողմը, իսկ կառլոսականները դա հերքում են՝ պնդելով, որ բարձրաստիճան զինվորականներից ոչ մեկը չհետևեց դավաճան գեներալ Ռամոն Կաբրերայի օրինակին: Ըստ թերթի՝ գեներալի անցնելը թշնամու բանակը առիթ տվեց դոն Կառլոսի զորքի մեջ երկպառակություն հարուցելուն և սաստկացրեց հյուսիսային գավառներում ժողովրդի մեջ խաղաղության ցանկությունը: Դոն Կառլոսը «կորցրեց ժողովրդականութիւնը գաւառական ազգաբնակչութեան» լայն խավերի շրջանում, որոնցից տվորականից ծանր տուքեր է գանձում և «անդադար պահանջում է փող և միշտ փող»: Այս պարագայում, եզրակացնում է թերթը, եթե կառլոսյան զորքի հիմնական ուժը պարտություն կրի, ապա «կառլոսյան ամբողջ գործը կորած է»: Կատալոնիայից ստացված լուրերով թերթը գրում է, որ կառլոսականները մի քանի հաղթանակ են տարել գեներալ Մարտինես Կամպոսի գլխավորած թագավորական զորքի նկատմամբ: Այլ լուրերով՝ գեներալ Մ. Կամպոսը 1875թ. մարտի 19-ին մտավ կառլոսականների պաշարած Օբլոտ քաղաքը, իսկ մարտի 24-ին Նիդաուրայի մոտ ջախջախեց կառլոսականներին, որոնք նահանջեցին: Արդյունքում թագավորական զորքն առանց դիմադրության մտավ Սանտա Կոլոմա քաղաքը[3]:

Կառլոսականների ճամբարի պառակտմանը որոշակիորեն նպաստեց նրանց բանակում նախորդ երկու պատերազմների մասնակից գեներալ-կապիտան Ռ. Կաբրերան: 1874թ. վերջին նա դոն Կառլոսին կոչ արեց ճանաչել Ալֆոնսոյի թագավորությունը և դադարեցնել պայքարը: Դոն Կառլոսը նրան հայտարարեց դավաճան ու զրկեց կոմս Մորելի տիտղոսից ու գեներալի կոչումից, որոնք Ալֆոնսոն ճանաչեց: 1875թ. ամ-

---

[1]Butler Clarke. Modern Spain 1815-1898, Cambrige, 1906, p. 393; Майский И. М. Указ. соч., с. 152.

[2]«Մշակ», 1875, 30 հունվարի, թիվ 4, էջ 4:

[3]«Մշակ», 1875, 10 ապրիլի, թիվ 14, էջ 3:

ռանը կառլոսականների գնդերը զենքը ցած դրեցին, կամ պարտություն կրեցին: Ալֆոնսո XII-ի դիրքերն ուժեղացան, երբ Անգլիան, Ֆրանսիան և այլ երկրներ ճանաչեցին նրա գահակալումը: Կառլոսականներին լուրջ հարված հասցրեց մինչ այդ իրենց աջակցող Հռոմի Պիուս IX պապը, ով 1875թ. մայիսի 3-ին օրհնեց Ալֆոնսոյի գահակալումը և ճանաչեց նրա կառավարությունը[1]:

1875թ. ամռանը քաղաքական աջակցությունից զրկված կառլոսականները կորցրեցին էբրո գետից հարավ ընկած իրենց դիրքերը: «Մշակին» հասած լուրերով՝ 1875թ. մայիսի 18(30)-ին Ալկարայի մոտ տեղի ունեցած կռվում կառլոսական գեներալ Ա. Դորրեգարան ոտքից վիրավորվեց և լքեց ռազմի դաշտը՝ տալով 70 սպանված և 200 վիրավոր, որոնց թվում կան նաև սպաներ: Թագավորական զորքի հրամանատարներից Ինֆանցոնան, առանց մեծ կորուստներ ունենալու, ամրացավ Ամեցագանայում՝ անտեսելով կառլոսականների անդադար հարձակումները[2]: Կառավարության հրամանով ձերբակալվել են գեներալներ Հիդալգոն, Պալանիսը, Դել Ամոն, Դիաս Բերրոն, նախկին պատգամավորներ Լալոսը և Ռուիս Սորիլան: Նրանք աքսորվել են Բալեարյան կղզիներ, իսկ մյուսները գտնվում են Մադրիդի բանտում[3]:

«Մշակի» գնահատմամբ՝ Իսպանիայի «քաղաքական պատերազմը մի և նույն ազգակործան դրութեան մէջ գտնվում»: Դոն Կառլոսը «երկրի մեծ մասի թագավորն է. տիրում է նրա վրա», ժողովրդից սովորականից ծանր տուրքեր է հավաքում և ունի զորաբանակ: Այն «թեև փոքրիկ և տկար է», բայց այնուամենայնիվ Ալֆոնսո թագավորի զորքը մինչ օրս չի կարողանում մի «նշանաւոր հաղթութիւն տանել նորա վրա»[4]: Ստացված նոր լուրերով «Մշակը» գրում է, որ «քաղաքական պատերազմը խոստանում է տէրութեան զորքերին կատարեալ յաղթութիւն»: Կառլոսականները պարտվել են Պյուիսերդայի մոտ, վիրավոր գեներալ Ա. Դորրեգարան անցել է Ֆրանսիայի սահմանը, էբրո գետի աջ ափն ամբողջովին ազատ է կառլոսականներից, իսկ ձախ ափում՝ նրանց ուժերը թուլացել են[5]:

Թերթի տեղեկությունը հավաստի է. 1875թ. ամռանը կառլոսականները գեներալներ Մարտինես Կամպոսի և Խոակին Խովելյարի հարվածներին չդիմանալով զիջեցին իրենց դիրքերը Կատալոնիայում և Վալենսիայում: Գեներալ Կաստելոն 1875թ. նոյեմբերին լքեց Կատալոնիան, որն ազատագրվեց կառլոսականներից: Պատերազմական գործողությունները փաստացի դադարեցին Նավարայում և Բասկոնիայում: Գեներալ Պրիմո դե Ռիվերան 1875թ. փետրվարի 19-ին գրավեց կառլոսականների մայրաքաղաք Էստոլիան, իսկ փետրվարի 21-ին գեներալ Կեսեդան նվաճեց Տոլոսան, որով կառլոսյան պատերազմն ավարտվեց: Փետրվարի 26-ին դոն Կառլոսը հարկադրված փախավ Ֆրանսիա: Պատերազմական գործողությունների ժամանակ արիություն և սառնասրտություն դրսևորած Ալֆոնսո XII-ը զինվորականության շրջանում հարգանք ու հեղինակություն ձեռք բերեց և Մադրիդ վերադարձավ որպես կատարյալ հաղթող:

---

[1]Майский И. М. Указ. соч., с. 152.
[2]«Մշակ», 1875, 5 հունիսի, թիվ 22, էջ 3:
[3]«Մշակ», 1875, 3 հուլիսի, թիվ 26, էջ 3:
[4]«Մշակ», 1875, 10 հուլիսի, թիվ 27, էջ 3:
[5]«Մշակ», 1875, 31 հուլիսի, թիվ 30, էջ 3:

Թագավորը ներում շնորհեց հազարավոր կառլոսականների, որոնք մինչև 1876թ. մարտի 15-ը զենքը ցած դրեցին[1]:

«Մշակը» ճիշտ է նկատում, որ 1876թ. փետրվարի դրությամբ «Իսպանիայի ներքին քաղաքական պատերազմը վերջացած պետք է համարել», քանի որ Ալֆոնսո XII թագավորի զորքը հաղթել է դոն Կառլոսին, ով լքել է Իսպանիան և անցել արտասահման[2]: «Մշակը» ճիշտ է ներկայացնում կառլոսյան երրորդ պատերազմի ավարտը, որն Իսպանիայում վերջ դրեց տասնամյակներ ընթացած գահաժառանգման համար պայքարին: Թերթի դիտարկմամբ՝ ետպատերազմյան Իսպանիայի քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները շատերի համար գրեթե աննկատ են անցնում: Արևելյան հարցի պատճառով այժմ Իսպանիայի մասին ոչ ոք չի մտածում, թեև այդ երկրում տեղի են ունենում ուշադրության արժանի իրադարձություններ: Կղերականները կրկին հզորացել են և վերականգնել իրենց երբեմնի դիրքերը, «սահմանադրութիւնը մնում է միայն իբր լոկ խոսք թղթի վրա, իսկ երկիրը կառավարվում է մի ամենաշահասեր կուսակցութեան կամայականութեան համեմատ»[3]:

Ազատամիտ միապետական կուսակցության առաջնորդ, կառավարության նախկին ղեկավար Ռուիս Սորիլլան և հանրապետական կուսակցության ղեկավար, Իսպանիայի հանրապետության նախկին նախագահ Նիկոլաս Սալմերոն միասին մշակել են նոր նախագիծ, որը նախատեսում է Իսպանիան հռչակել հանրապետություն՝ 1869թ. սահմանադրության հիմքի վրա և իրականացնել մի շարք բարեփոխումներ բազմաթիվ ոլորտներում: Բայց նրանց ծավալած շարժումը, նկատում է «Մշակը», դեռ չսկսած ավարտվեց, որովհետև իշխանություններն ու մամուլն այն որակեցին կոմունիստական և ծախողեցին: Կառավարությունը ներկայումս ձգտում է Նավարրայում և Բասկոնիայում վերացնել ֆուերոսները ու նրանցից պահանջում է մյուս գավառներին հավասար հարկեր վճարել և զորք տրամադրել[4]:

Թերթն իրավացի է. Կ. Կանովասի կառավարությունը Բասկերի երկրի ինքնավարության և կաթոլիկ եկեղեցու դիրքերի վերականգման հարցերը կարգավորեց 1876թ. հունիսի 30-ին կորտեսների հաստատած նոր սահմանադրությամբ: Նրանով Իսպանիան հռչակվեց ժառանգական սահմանադրական միապետություն, Հռոմեա-կաթոլիկական առաքելական կրոնը ճանաչվեց պետական կրոն: Ազգը պարտավոր էր աջակցել կրոնի պաշտամունքին և եկեղեցու սպասավորներին: Բասկոնիան կորցնում էր իր միջնադարյան իրավունքներն ու ֆուերոսը:

[1]Майский И. М. Указ. соч., с. 152, История Испании, с. 372.

[2]«Մշակ», 1876, 26 փետրվարի, թիվ 79, էջ 3:

[3]«Մշակ», 1876, 25 նոյեմբերի, թիվ 45, էջ 3:

[4]«Մշակ», 1876, 27 մայիսի, թիվ 19, էջ 3, 1877, 24 հունիսի, թիվ 4, էջ 3:

Եզրակացություն

«Մշակը» կառլոսյան երրորդ պատերազմի գլխավոր պատճառը համարում է տարիներ շարունակ Բուրբոնների արքայատոհմի ներսում գահաժառանգման համար ծավալված պայքարը: Թերթը հանգամանորեն անդրադառնում է կառավարության և կառլոսականների զինված հակամարտությանը, որն անվանում է եղբայրասպան պատերազմ: «Մշակը» կառլոսականներին համարում է հին կարգերի, քաղաքական սկզբունքների ու կղերականության կողմնակից, որոնք, ի դեմս օրինական իշխանության, պայքարում են նոր սկզբունքների, առաջադիմության և ազատամտության դեմ: Թերթը կառլոսյան պատերազմը գնահատում է որպես ծնվող հանրապետության և մեռնող միապետության հուսահատ պատերազմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Մշակ», 1872, մայիսի 11, մայիսի 18, հունիսի 1:
2. «Մշակ», 1873, հունվարի 18, հունվարի 25, մարտի 1, ապրիլի 5, հուլիսի 12, հուլիսի 19, օգոստոսի 9, օգոստոսի 30, նոյեմբերի 29:
3. «Մշակ», 1874, մայիսի 30, հունիսի 20, օգոստոսի 8, օգոստոսի 29, սեպտեմբերի 19, սեպտեմբերի 26, նոյեմբերի 21, դեկտեմբերի 12:
4. «Մշակ», 1875, հունվարի 23, հունվարի 30, ապրիլի 10, հունիսի 5, հուլիսի 3, հուլիսի 10, հուլիսի 31:
5. «Մշակ», 1876, փետրվարի 26, մայիսի 27, նոյեմբերի 4, նոյեմբերի 25:
6. «Մշակ», 1877, հունիսի 24:
7. «Մշակ», 1878, սեպտեմբերի 23:
8. Գևորգյան, Լ. Գրիգոր Արծրունին և նրա «Մշակը», Երևան, 1996:
9. Լեո, Գրիգոր Արծրունի, հ. 2, Թիֆլիս, 1903:
10. Մշակի» քառասունամեակ (1872-1912), կազմեց Լ. Դանիելյան, Թիֆլիս, 1912,
11. Дебидур А. Дипломатическая история Европы: От Венского до Берлинского конгресса (1814-1878), 1995.
12. Испанские короли, Под ред. В. Л. Бернекера н др., Ростов-на-Дону, 1998, .
13. История XXI века. Под ред. Лависса и Рамбо, т. 3, М., 1938.
14. История Испании. Том 2. От войны за нспанское наследие до начала XXI века, М., 2014.
15. Майский Н. М. Испания н Португалия. 1808-1917, М., 1959.
16. Butler Clarke. Modern Spain 1815-1898, Cambrige, 1906, 510 p.

REFERENCES

1. «Mshak», 1872, mayisi 11, mayisi 18, hunisi 1.
2. «Mshak», 1873, hunvari 18, hunvari 25, marti 1, aprili 5, hulisi 12, hulisi 19, ogostosi 9, ogostosi 30, noyemberi 29.
3. «Mshak», 1874, mayisi 30, hunisi 20, ogostosi 8, ogostosi 29, septemberi 19, septemberi 26, noyemberi 21, dektemberi 12.
4. «Mshak», 1875, hunvari 23, hunvari 30, aprili 10, hunisi 5, hulisi 3, hulisi 10, hulisi 31.

5. «Mshak», 1876, petrvari 26, mayisi 27, noyemberi 4, noyemberi 25.
6. «Mshak», 1877, hunisi 24.
7. «Mshak», 1878, septemberi 23.
8. Gevorgyan L. Grigor Arcrunin ev nra «Mshak», Erevan, 1996, 412 ej.
9. Leo, Grigor Arcruni, h. 2, Tiflis, 1903, 555 ej.
10. «Mshaki» qarasunameak (1872-1912), kazmec L. Danielyan, Tiflis, 1912.
11. Debidur A. Diplomaticheskaya istoriya Evropi: Ot Venskogo do Berlinskogo kongressa (1814-1878), 1995, s. 482.
12. Ispanski koroli, Pod red. V. L. Bernekera I dr., Rostov-na-Dony, 1998, s. 512.
13. Istoriya XXI veka. Pod red. Lavissa i Rambo, t. 3, M., 1938, s. 651.
14. Istoriya Ispanii. Tom 2. Ot voini za ispanskoe nasledie do nachala XXI veka, M., 2014. Mayskii N. M. Ispaniya I Portugaliya. 1808-1917, M., 1959.
15. Butler Clarke. Modern Spain 1815-1898, Cambrige, 1906.

РЕЗЮМЕ
ГАЗЕТА «МШАК» («ТРУЖЕНИК») О ВТОРОЙ КАРЛИСТСКОЙ ВОЙНЕ В ИСПАНИИ

Мовсисян Феликс
д.и..н., профессор, заведующий кафедрой истории ВГУ
Ванадзор, Республика Армения

Газета «Мшак», идеолог и флагман восточноармянского либерального течения, регулярно освещала ход Карлистской войны в Испании 1872-1876 гг. в разделах «Зарубежные новости» и «Зарубежное обозрение». Газета справедливо утверждала, что основной причиной войны является борьба за престолонаследие внутри династии Бурбонов. «Мшак» характеризовал продолжающуюся войну между сторонниками испанского государства и последователями дона Карлоса как гражданскую, кровавую и братоубийственную бойню. Газета называет карлистов приверженцами старого порядка и клерикализма, а их армию – бандой, борющейся против законного правительства. «Мшак» восторженно приветствовал провозглашение республики в Испании и высказал мнение, что испанский народ с энтузиазмом отнесется к установлению республики в стране. Исходя из этих соображений, газета считала Карлистскую войну борьбой между сторонниками старого порядка и поборниками прогресса, отчаянной войной между зарождающейся республикой и отмирающей монархией.

Ключевые слова: Испания, фуэрос, престолонаследие, Изабелла II, дон Карлос, гражданская война, республика, Амадей I, Альфонсо XII

SUMMARY

THE NEWSPAPER ‘’MSHAK’’ ON THE THIRD CARLIST WAR IN SPAIN

Movsisyan Feliks

Doctor of Historical Sciences, Professor, Head of the Chair of History, VSU
Vanadzor, Republic of Armenia

‘’The Mshak’’ newspaper, the ideologue and pioneer of the Eastern-Armenian liberal current, highlighted the ongoing Carlist War taken place in Spain in 1872-1876, the course of which was regularly covered in ‘’The Foreign News’’ and ‘’Foreign Review’’ sections.

The newspaper stated that the main reason for the war was the struggle for the succession to the throne within the Bourbon dynasty. ‘’The Mshak’’ characterized the ongoing war between the supporters of the Spanish state and that of Don Carlos as being civil, bloody and fratricidal. The newspaper considered the Carlists to be supporters of the old order and the clergy and their army- a gang fighting against the legitimate government. ‘’The Mshak’’ praised the declaration of the Republic in Spain and thought that the Spanish people were enthusiastic about the establishment of the Republic in their country. Based on this, the newspaper considered the Carlist war to be a struggle between supporters of the old order and progress, a desperate war between the emerging republic and the dying monarchy.

Keywords: Spain, Fueros, succession to the throne, Isabella II, don Carlos, civil war, republic, Amadeo I, Alfonso XII.